

ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ. ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Ա. Ե. Հովսեփյան

Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարան

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հողվածում քննարկվում են անջատողական շարժումները՝ որպես միջազգային հանրության անվտանգության առջև ծառայած լրջագույն մարտահրավերներ, որի շրջանակներում դիտարկվում է մասնավորապես քրդական հարցը Թուրքիայում, ինչպես նաև իրաքյան Քրդստանի դերը թուրք-իրանական հարաբերություններում:

Բանալի բառեր. *անջատողական շարժում, Թուրքիա, քրդական հարց, միջազգային հանրություն, միջազգային հանրության անվտանգություն:*

Անջատողական շարժումները կամ անջատողականությունը երևույթ է, երբ մի պետության ներսում գտնվող խումբ, փոքրամասնություն փորձում է անջատվել տվյալ պետությունից և ձեռք բերել անկախություն: Առհասարակ ընդունված է առանձնացնել «Ակտիվ խաղաղ» և «ակտիվ բռնի» անջատողական շարժումները: Առաջինի դեպքում գործընթացը տեղի է ունենում խնդրագրերի, ազգային օրենքների և այլնի միջոցով, իսկ երկրորդն ուղեկցվում է ահաբեկչություններով, քաղաքացիական պատերազմներով և այլն¹: Անջատողական շարժումները առաջանում են մշակութային, կրոնական, տնտեսական, էթնիկ, քաղաքացիական և այլ հիմքերի վրա: Ըստ Ռայբինի՝ անջատողականության առանցքային ու հիմնական խթանը հանդիսանում է ազգայնականությունը, և առաջ է քաշում այն տեսակետը, որ համաշխարհայնացման պայմաններում, կվերանա անջատողականության վտանգը, քանի որ դրա պարագային, «ազգայնականություն» երևույթն ինքնին կվերանա: Հեղինակն այն կարծիքին է, որ ինքնության գործոնն է, որ հանգեցնում է անջատողական շարժումների, իսկ այդ պարագայում, երբ սրա հետևանքով ռազմական բախումներ ու պատերազմներ են սկսվում,

¹ Demerdash E., “Separation Movements in Europe”, https://www.researchgate.net/publication/303178611_Separation_Movements_in_Europe#pf4, (09.06.2020).

ազգայանակություն երևույթը չի կարող ընկալվել դրական իմաստով²:

Ընդունված է համարել, որ անջատման ձգտող երկրամասերը հիմնականում տնտեսապես ավելի թույլ են զարգացած, քան պետության մնացյալ կենտրոնական հատվածը, ինչի լուծումը նման տարածքներում բնակվող մարդիկ տեսնում են անջատվելու և անկախ կերպով իրենց զարգացումն ապահովելու մեջ³, սակայն հիմնականում ստացվում է այնպես, որ նման մղում ունեցող միավորումները չեն ունենում բնական այնպիսի պաշարներ, տնտեսական ռեսուրսներ, որոնց միջոցով հետագայում հնարավոր կլինի ապահովվել որպես անկախ և ինքնավար պետություն⁴: Այսպիսով, տարածված է այն տեսակետը, որ թույլ զարգացած երկրամասերում անջատողականության վտանգն ավելի մեծ է քան զարգացած հատվածներում, քանի որ բնակիչներն իրենց պայմանների համար պատասխանատու են համարում տվյալ երկրի ղեկավարությանը⁵: Ըստ Դմիտրի Սոյինի՝ 20-րդ դարում տեղի ունեցած էթնիկ բախումներն ու անջատողական շարժումները կարելի է պայմանականորեն բաժանել երեք հիմնական «ալիքների»: Ընդունված է համարել, որ առաջին ալիքը տեղի ունեցավ առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ փլուզվեցին Ավստրիայի ու Յուգոսլավիայի կայսրությունները, Ռուսական, Օսմանյան կայսրությունները: Երկրորդ ալիքը սկսվեց երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ և գաղութատիրությունների փլուզմամբ: Իսկ երրորդն սկսվեց ԽՍՀՄ փլուզումով և շարունակվում է մինչ օրս⁶:

Ներկայումս անջատողական շարժումները հանդիսանում են միջազգային հանրության անվտանգության առջև ծառայած լրջագույն մարտահրավերներից մեկը, որոնք իրենց տարածվածությամբ ընդգրկում են բավականին լայն աշխարհագրություն: Նման շարժումներից է նաև Քրդական հարցը, որը, ըստ էության, Թուրքիայի Հանրապետության համար այսօր օրակարգային խնդիր է:

Քրդերը էթնիկ առումով դասականորեն բաժանված ժողովուրդ են, ուստի

² Ryabinin Y., “THE BASIC CAUSES OF THE CONTEMPORARY SEPARATISM”, *Journal of Geography, Politics and Society*, 2017, 7(1), 5–9.

³ Ryabinin Y., *Նշված աշխ.*

⁴ Butt A., “Secession and Security: Explaining State Strategy against Separatists”, *Cornell University Press*, pp. 17-23.

⁵ Demerdash E., *Նշված աշխ.*

⁶ Соин Д.Ю., 1998, “Этнополитические конфликты: аналитический обзор”, <https://www.jour.isras.ru/index.php/socjour/article/view/581/5763>, (09.06.2020).

հաճախ նրանց անվանում են մասնատված ժողովուրդ, ժողովուրդ առանց երկրի և առանց պետականության⁷, ինչի առթիվ անգլիացի դիվանագետ լորդ Քերզոնը գրել է, որ քրդերի պատմությունը հիմնովին մութ է, և, որ «այն ժողովուրդ է առանց գրականության և համարյա առանց պատմության»⁸: Քրդերը հանդիսանում են Միջին Արևելքի մեծությամբ չորրորդ եթնիկ խումբը՝ արաբներից, թուրքերից և պարսիկներից հետո: Քրդերը Միջին Արևելքի պետություններում՝ Թուրքիայում, Իրանում, Իրաքում և Սիրիայում լրջագույն դերակատարություն ունեն, և, չնայած նրանց մեծաթիվ բնակչության, քրդերը վերոնշյալ 4 պետություններում ներկայումս համարվում են փոքրամասնություն: Նրանք, կազմելով 30-40 միլիոն, աշխարհի ամենամեծ պետություն չունեցող ազգն են համարվում («stateless nation»)՝ Քրդերը հանդիսանում են աշխարհի եզակի եթնիկ խումբը, որն ունենալով բնակչության նման թվաքանակ, չունի պետականություն: Իսկ Թուրքիայում նրանց թիվը հասնում է մոտավորապես 15 միլիոնի, որը կազմում է Թուրքիայի բնակչության 20 տոկոսը¹⁰:

Մերձավոր և Միջին Արևելքում իրենց թվաքանակով քրդերը չորրորդ ժողովուրդն են արաբներից, պարսիկներից և թուրքերից հետո: Ներկայումս աշխարհում նման թվաքանակով որևէ ժողովուրդ գոյություն չունի, որ պետականություն չունենա: Քրդական քաղաքական կուսակցությունները, ինչպես նաև ազգայնական շրջանները հավակնում են քրդական պետություն ստեղծել այսպես կոչված «եթնիկ Քրդստանի» շրջանակներում, որը ներառում է Թուրքիայի արևելյան շրջանները, Իրանական և Իրաքյան Քրդստանը, ինչպես նաև Սիրիայի հյուսիսային քրդաբնակ շրջանները¹¹: Վերլուծության ենթարկելով քրդական հասարակության կառուցվածքը, Առնուլֆ Թոյնբրին գրում էր, որ քրդական ազգային զգացումը իրեն կարող է դրսևորել թուրքերին, արաբներին, անգլիացիներին կամ որևէ այլ օտար տարրի դեմ

⁷ Michael Eppel. *A People without a State. The Kurds from the Rise of Islam to the down of Nationalism*. Austin, pp679-682: University of Texas Press, 2016

⁸ *Քաղաքական և, Քրդական հարցի ներկա վիճակը և զարգացման միտումները, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2017 № 2 (23), էջ 3-18:*

⁹ Michael M. Gunter. *The Kurds: A Modern History*, Princeton, New Jersey, 2016, pp. 210-211

¹⁰ Michael M. Gunter, *Նշված աշխ.*

¹¹ Graham E. Fuller, Ian O. Lesser. *Turkey's new geopolitics: from the Balkans to Western China*, Colorado, 1993, p. 62:

հակադրվելու ձևով, սակայն այն կատարելապես բացակայում է, երբ խոսքը գնում է մեկ ընդհանուր քրդական համադաշնության մասին: Նրա կարծիքով քրդերի մեծամասնության քաղաքական հորիզոնը դեռևս սահմանափակվում է ցեղերի ու նրանց հակամարտության շրջանակներում: Բավականին կենսունակ լինելով հանդերձ՝ քրդերը «ամբողջությամբ մնացին անհատական, բայց ոչ համապետական հոգեբանությամբ օժտված ժողովուրդ»¹²: Թուրքիայի քրդերին երկար տարիներ շարունակ ապստամբական ելույթներ են ունենում իշխանությունների դեմ և մշտական պայքար մղում՝ հանուն իրենց ազգային իրավունքների: 1984 թ. սկսած Աբդուլլա Օջալանի Քրդստանի աշխատավորական կուսակցությունը (ՔԱԿ), ձևավորված 1978 թ., բացահայտ կերպով զինված պայքար է մղում թուրքական կառավարության դեմ՝ կրկին նպատակ ունենալով Թուրքիայի հարավարևելյան և Իրաքի հյուսիսարևմտյան մասերում ստեղծել քրդական պետություն: Այդ կուսակցությունը առաջ է քաշում քրդական պետության ստեղծման դաշնային սկզբունքը, որը ենթադրում է թուրք-քրդական, իրանա-քրդական և սիրիա-քրդական դաշնության ստեղծումը¹³: Թուրքիայի իշխանությունների հետ սերտ հարաբերություններ ունեցող Յուսիսային Իրաքի քրդական ինքնավարությունը պատրաստվում էր գնալ պատմական հանրաքվեի, որի նպատակն է դուրս գալ Իրաքի կազմից և անկախություն հռչակել: Պաշտոնական Անկարան, սակայն, չողջունեց Իրաքյան Քուրդիստանի նման որոշումը: Անհրաժեշտ է նշել, որ Յուսիսային Իրաքի քրդական ինքնավարությունում անկախության հանրաքվե նախատեսվում էր իրականացնել դեռևս 2014 թ., սակայն տարածաշրջանում, մասնավորապես Սիրիայում և Իրաքում «Իսլամական պետություն» խմբավորման կողմից ծավալվող գործողությունները շարունակ հետաձգում էին դրա կազմակերպումը:

Հետագայում՝ 2016 թ., քրդական ինքնավարության վարչապետ Նեչիրվան Բարզանին հայտարարեց, որ հանրաքվեի անցկացումը կհետաձգվի, քանի դեռ Մոսուլ քաղաքն ազատագրված չէ: Իսկ արդեն 2017 թվականին Մոսուլի ազատագրվելուն պես քրդական ինքնավարության ղեկավարները հայտա-

¹² A. Toynbee, *The Islamic World since the peace settlement, Survey Of International Affairs 1925 Vol-1, Oxford University Press London, pp. 659-661.*

¹³ *Мурадян И. Проблемы безопасности в ближневосточной политике США. Ер., 2003, с. 125*

րարեցին այդ տարվա ընթացքում հանրաքվեն կազմակերպելու մասին: Վերջնական հայտարարությամբ հանդես եկավ Հյուսիսային Իրաքի քրդական ինքնավարության նախագահ Մեսուդ Բարզանին, ով 2017 թ. հունիսի 7-ին մի շարք քրդական կուսակցությունների առաջնորդների հետ հանդիպումից հետո հայտարարեց, որ սեպտեմբերի 25-ին կանցկացվի անկախության հանրաքվե¹⁴: Անկախ արդյունքներից, հանրաքվեն, այնուամենայնիվ, որոշիչ դերակատարություն չունեցավ, քանի որ այն օրինական ուժ չուներ: Հանրաքվեին թուրքիայի արձագանքի մասին խոսելիս անհրաժեշտ է նշել, որ վերջինս բարիդրացիական հարաբերությունների մեջ է Հյուսիսային Իրաքի քրդական ինքնավարության հետ, որը հայտնի է նավթային հարուստ պաշարներով:

Թերևս լրջագույն պատճառներից մեկն էլ այն է, որ վերջինս մշտապես դեմ է թուրքիայի ներսում գործող թուրքիայի բանվորական կուսակցությանը, որի առաջնորդ Աբդուլլահ Օջալանը պայքարելով թուրքիայում ապրող քրդերի իրավունքների պաշտպանության համար, 1995 թ. դատապարտվեց ցմահ ազատազրկման: Այնուամենայնիվ, թուրքիայի կողմից չընդունվեց որոշումը, քանի որ, ինչպես նշել էր Էրդողանը, Հյուսիսային Իրաքի, Հյուսիսային Իրաքի ղեկավարության հայտարարությունը խորապես վշտացրել է իրենց: Նա որոշումը որակեց որպես «սխալ քայլ»՝ նշելով, որ Իրաքի տարածքային ամբողջականությունը պիտի պահպանվի¹⁵:

Այսպիսով, թուրքիայի և Իրանի համար ռազմավարական առանցքային խնդիր է համարվում Իրաքի քրդական ինքնավարության անկախությունը կասեցնելը: Այս պետությունների համար շառ կարևոր է, որ Իրաքյան Քրդստանը իրաքյան դաշնության անդամի կարգավիճակից չվերածվի անկախ պետական կազմավորման, և, սրա շուղղությամբ անում են ամեն հնարավորը, որպեսզի մեկուսացնեն իրաքյան քրդստանը՝ իրենց երկրների քաղաքական ընդդիմությունների հետ շփումներ չունենալու համար:

Անդրադարձ կատարելով քրդերի պատմական առանձնահատկու-

¹⁴ Կասյան Ա., Իրաքյան Քուրդիստանի անկախության հանրաքվեն և Թուրքիան. պաշտոնական Անկարան մտավախություններ ունի, <https://armenpress.am/arm/news/896102/>, (08.06.2020):

¹⁵ Karadeniz T., Korsunskaya D., Turkey's Erdogan calls Iraqi Kurdish referendum illegitimate, <https://www.reuters.com/article/us-mideast-crisis-kurds-referendum-erdog/turkeys-erdogan-calls-iraqi-kurdish-referendum-illegitimate-idUSKCN1C32YG>, (09.06.2020)

թյուններին, ինչպես նաև ուսումնասիրելով քրդական հարցը թուրքիայում կարելի է կարծել, որ առաջնային պատճառը, թե ինչու քրդերն այսքան ժամանակ չեն կարողացել ստեղծել իրենց պետականությունը, այն է, որ նրանք երբեք չեն եղել միատարր, չեն եղել համախմբված մի նպատակի շուրջ, ինչի արդյունքում վերջնական նպատակին հասնելը գնալով ավելի անհրատեսական է թվում: Իսկ խնդրի կարգավորման համար գոյություն ունեցող մի շարք տարբերակներից ու պահանջներից, հավանաբար, ավելի իրատեսական է այն, որ քրդերը պետք է մնան թուրքիայի կազմում, ինչին և նրանք սովոր են, սակայն ունենան իրենց իրավունքները և փորձեն զարգանալ հենց թուրքիայի ներսում, քանի որ անկախանալուց հետո ավելի բարդ կլինի զարգացնել պետություն հարևան և թշնամական թուրքիայի կողքին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բայբուրդյան Վ., Քրդական հարցի ներ կա վիճակը և զարգացման միտումները, Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 2017, 2 (23)
2. A. Toynbee, *The Islamic World since the peace settlement, Survey Of International Affairs 1925 Vol-1*, Oxford University Press London
3. Butt A., “Secession and Security: Explaining State Strategy against Separatists”, *Cornell University Press*,
4. Demerdash E., “Separation Movements in Europe”, https://www.researchgate.net/publication/303178611_Separation_Movements_in_Europe#pf4, (09.06.2020).
5. Graham E. Fuller, Ian O. Lesser. *Turkey’s new geopolitics: from the Balkans to Western China*, Colorado, 1993
6. Michael Eppel, *A People without a State. The Kurds from the Rise of Islam to the down of Nationalism*. Austin, University of Texas Press, 2016
7. Michael M. Gunter. *The Kurds: A Modern History*, Princeton, New Jersey, 2016
8. Ryabinin Y., “THE BASIC CAUSES OF THE CONTEMPORARY SEPARATISM”, *Journal of Geography, Politics and Society*, 2017, 7(1)
9. Мурадян И. Проблемы безопасности в ближневосточной политике США. Ер., 2003
10. Соин Д.Ю., 1998, “Этнополитические конфликты: аналитический обзор”, <https://www.jour.isras.ru/index.php/socjour/article/view/581/5763>, (09.06.2020).

СЕПАРАТИСТСКИЕ ДВИЖЕНИЯ КАК УГРОЗАМЕЖДУНАРОДНОЙ БЕЗОПАСНОСТИ: КУРДСКИЙ ВОПРОС В ТУРЦИИ

А.Е. Овсеян

АННОТАЦИЯ

В статье рассматривается вопрос о сепаратистских движениях, как серьезном вызове международной безопасности, а также курдский вопрос в Турции и роль иракского Курдистана в турецко - иранских отношениях.

Ключевые слова: *сепаратистское движение, Турция, Курдский вопрос, международное сообщество, международная безопасность.*

SEPARATIST MOVEMENTS AS A THREAT TO INTERNATIONAL SECURITY: THE KURDISH PROBLEM IN TURKEY

A.E. Hovsepyan

SUMMARY

The article discusses separatist movements as a serious challenge to the international security, particularly, the Kurdish issue in Turkey, as well as, the role of Iraqi Kurdistan in Turkish-Iranian relations.

Key words: *separatist movement, Turkey, Kurdish issue, international community, Security of the international community.*